ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ (ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ) ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2011

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԵՊՀ Գիտական խորհրդի
2011թ. հունիսի 2-ի թիվ 6 նիստում

ԳԽ նախագահ, ռեկտոր _____ Ա. Հ. Սիմոնյան

ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ (ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ) ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված հապավումներ 4

1. Ընդհանուր դրույթներ 5

2. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը (մշտադիտարկումը) 6

2.1. Մոնիթորինգի նպատակը և խնդիրները 6

2.2. Մոնիթորինգի ընթացակարգը 7

3. ԵՊՀ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը 11

3.1. Պարբերական վերանայման նպատակը և խնդիրները 11

3.2. Պարբերական վերանայման ընթացակարգը 12

Հավելվածներ 13

Հավելված 1. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) հաշվետվության ձևաթերթը 14

Հավելված 2. ԵՊՀ կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ընթացակարգի սխեման 20

Հավելված 3. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ժամանակացույցը 21

Օգտագործված հապավումներ

ԳԽ – Գիտական խորհուրդ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ՄԹԽ – Մոնիթորինգի խումբ

ՄԽ-Մեթոդական խորհուրդ

ՄԹՀ – Մոնիթորինգի հաշվետվություն

ՈւԱԳ պրոռեկտոր – Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՈւՄՎ – Ուսումնամեթոդական վարչություն

ՈւՍ – Ուսումնական ստորաբաժանում

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) ԵՊՀ-ում ներմուծում է բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացները:

2. Կարգը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, այդ գործընթացներին ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը:

3. Կարգում տրվում է նաև ծրագրի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) հաշվետվության ձևաթերթը՝ ծրագրի կատարողականի առանցքային ցուցանիշների ցանկով, ծրագրի պարբերական վերանայման համար պահանջվող փաստաթղթային փաթեթի կազմը և այլն:

4. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները ԵՊՀ կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներն են: ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման բոլոր կրթական ծրագրերը պետք է ենթարկվեն տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման՝ սկսած 2012/13 ուստարուց:

5. Ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնում են ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետ, կենտրոն)՝ տարեկան պարբերականությամբ, իսկ վերանայումը հանդիսանում է բուհական գործընթաց, որի պարբերականությունը որոշվում է սույն կարգով՝ ելնելով ծրագրի կրթական մակարդակից, մասնագիտական ոլորտից և բնույթից:

2. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը (մշտադիտարկումը)

2.1. Մոնիթորինգի նպատակը և խնդիրները

6. Կրթական ծրագրերի կանոնավոր մոնիթորինգը որակի ապահովման ներքուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին ու համապատասխան կրթական չափորոշչի պահանջներին: Մոնիթորինգի վերջնարդյունքը ծրագրի որակի բարելավմանն (բարձրացմանը) ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:

7. Մոնիթորինգի խնդիրներն են.

   - գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների սահմանած նպատակների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը,
   - գնահատել դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը, բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները,
   - վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները և անհրաժեշտ ճշգրտումներ առաջարկել ծրագրում և դասընթացներում,
   - վերլուծել ծրագրի հիմնական քանակական բնութագրերը (ընդունելություն, համակազմ, հեռացումներ, առաջադիմություն, շրջանավարտների զբաղվածություն և այլն) և բացահայտել վտանգավոր միտումները,
   - գնահատել ծրագրի որակի բարելավման/բարձրացման նախորդ ուստարվա պլանի կատարողականը,
   - բացահայտել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մշակել (լրամշակել) ծրագրի որակի բարելավմանն (բարձրացմանը) ուղղված միջոցառումների և գործողությունների նոր պլան և ապահովել վերջինիս կատարումը:

8. ԵՊՀ–ում կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր գործընթացն իրականացվում է երկու մակարդակներով (փուլերով)՝ ֆակուլտետային/կենտրոնային և համալսարանական: Մոնիթորինգն ընդգրկում է համալսարանի բոլոր կրթական ծրագրերը:

2.2. Մոնիթորինգի ընթացակարգը

9. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի գործընթացն սկսվում է ռեկտորի հրամանով՝ Ուսումնամեթոդական վարչության (ՈՒՄՎ) կողմից ներկայացված մոնիթորինգի ենթակա կրթական ծրագրերի ցանկի և դրանց մոնիթորինգի անցկացման ժամանակացույցի հիման վրա:

10. Կրթական ծրագրի մոնիթորինգի գործընթացը նախաձեռնում և իրականացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետ, կենտրոն)՝ տարեկան պարբերականությամբ:

11. Մոնիթորինգի գործընթացն իրականացնում են ուսումնական ստորաբաժանման ղեկավարի կողմից յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ ծրագրերի խմբի համար ձևավորված մոնիթորինգի խմբերը: Գործընթացն սկսվում է ծրագրի նախորդ ուստարվա կատարողականի ցուցանիշների հավաքմամբ և վերլուծությամբ:

12. Մոնիթորինգի խումբն առաջնորդվում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի սույն ընթացակարգով և հաստատված ժամանակացույցով: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա, ըստ սահմանված հաշվետվության ձևաթերթի (տե՛ս *հավելված 1*), մոնիթորինգի խումբը կազմում է տարեկան հաշվետվությունը և հաջորդ ուստարում կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (փոփոխությունների) պլանի նախագիծը:

13. Մոնիթորինգի հաշվետվությունը սահմանված ձևաթերթի միջոցով պարունակում է ծրագրի նախորդ ուստարվա կատարողականի ցուցանիշները, որոնք ընդգրկում են նաև ծրագրին մասնակից ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները:

14. Մոնիթորինգի հաշվետվությունները ներկայացվում են մեթոդական խորհրդի նախագահին՝ ստորաբաժանման մեթոդական խորհրդի (ՄԽ) դիտարկմանը ներկայացնելու համար:

15. Ուսումնական ստորաբաժանման մեթոդական խորհուրդը քննարկում է առանձին մոնիթորինգի խմբերի (ՄԹԽ) ներկայացրած հաշվետվություններն ու կից փաստաթղթերը և համապատասխան եզրակացությամբ դրանք ներկայացնում ստորաբաժանման ղեկավարին:

16. Ուսումնական ստորաբաժանման ղեկավարը, հիմնվելով ներկայացված հաշվետվությունների վրա, կազմում է իր ստորաբաժանման կրթական ծրագրերի մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը՝ ներկայացնելով այն ուսումնական ստորաբաժանման խորհրդի քննարկմանը:

17. Ուսումնական ստորաբաժանման խորհուրդը քննարկում է տարեկան մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը և ընդունում համապատասխան որոշում: Խորհրդի որոշումը պետք է ներառի՝

- մոնիթորինգի ընդհանուր գնահատականը,
- նախորդ մոնիթորինգի որոշման կատարողականը,
- բարելավմանն ուղղված միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն ուսումնական ստորաբաժանման և ամբիոնների մակարդակով,
- ԵՊՀ կենտրոնական վարչակազմին հասցեագրվող հիմնախնդիրները:

18. Ուսումնական ստորաբաժանման խորհրդի որոշմամբ հավանության արժանացած տարեկան մոնիթորինգի հաշվետվությունների հիման վրա ստորաբաժանման ղեկավարը կազմում է կրթական ծրագրերի մոնիթորինգի երկամյա հաշվետվություն, որը երկու տարին մեկ ներկայացվում է ՈՒՄՎ-ի դիտարկմանը:

19. ՈՒՄՎ-ն իրականացնում է ստորաբաժանումներից ստացված մոնիթորինգի հաշվետվությունների և կից փաստաթղթերի՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումն ու գնահատումը: Անհամապատասխանության դեպքում դրանք վերադարձվում են ուսումնական ստորաբաժանմանը՝ վերանայման համար:

20. Ընդունված հաշվետվությունների վերլուծության արդյունքների հիման վրա ՈՒՄՎ-ն պատրաստում է համալսարանի կրթական ծրագրերի մոնիթորինգի

ամփոփիչ հաշվետվությունը և համապատասխան եզրակացություններով ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով (ՈՒԱԳ) պրոռեկտորին:

21. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, դիտարկելով ամփոփիչ հաշվետվությունը, հղում է այն ԵՊՀ մեթոդական խորհրդին՝ քննարկելու և համահավաք կարծիք ձևավորելու համար:

22. ԵՊՀ մեթոդական խորհուրդը քննարկում է մոնիթորինգի հաշվետվությունը և կազմում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշման նախագիծ, որը ներառում է հետևյալ թիրախային հարցերը.

- մոնիթորինգի ընդհանուր գնահատականը,
- մոնիթորինգի նախորդ որոշման կատարողականը,
- անդրադարձ ուսումնական ստորաբաժանման առաջարկություններին/երաշխավորություններին,
- կրթական ծրագրերի փոփոխությունների առաջարկություններ,
- ծրագրի բարելավմանն ուղղված այլ առաջարկություններ:

23. ԵՊՀ Գիտական խորհուրդը, հիմնվելով ՈՒՄՎ-ի և մեթոդական խորհրդի եզրակացությունների և կայացած քննարկման արդյունքների վրա, ընդունում է համապատասխան որոշում, որը հիմք է հանդիսանում ծրագրերի բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների և փոփոխությունների իրականացման համար:

24. Մոնիթորինգի հատուկ ընթացակարգ է կիրառվում ռիսկային բնույթի կրթական ծրագրերի հետևյալ խմբերի համար.

- նոր ներմուծված (իրականացման առաջին շրջափուլում գտնվող) ծրագրեր,
- ծրագրեր, որոնք ունեն բացասական եզրակացություն նախորդ տարեկան մոնիթորինգի կամ որակի արտաքին գնահատման արդյունքներով,
- ընդունելության, ռեսուրսային ապահովվածության և/կամ ուսումնական առաջադիմության կրկնվող ցածր ցուցանիշներով ծրագրեր,

- ծրագրեր, որոնց վերաբերյալ ուսանողական հարցումները և շրջանավարտների բավարարվածության հարցումները տալիս են կրկնվող ցածր գնահատականներ:

25. Ռիսկային համարվող ծրագրերի մոնիթորինգի գործընթացն իրականացվում է սույն ընթացակարգով՝ այն տարբերությամբ, որ յուրաքանչյուր ծրագրի համար մոնիթորինգի հաշվետվությունը բոլոր մակարդակներում քննարկվում է առանձին: Ընդ որում, ուսումնական ստորաբաժանման խորհրդի որոշման մեջ պետք է նախատեսվի առանձին կետ՝ ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման առաջարկությամբ:

26. Ռիսկային բնույթի կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունները ԵՊՀ Գիտական խորհուրդը քննարկում է յուրաքանչյուր տարի:

27. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի դեպքում ԵՊՀ Գիտական խորհուրդը, հիմնվելով ՈՒՄՎ-ի և մեթոդական խորհրդի եզրակացությունների և կայացած քննարկման արդյունքների վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- մոնիթորինգի արդյունքները համարել բավարար և շարունակել ծրագիրը՝ հաշվի առնելով մոնիթորինգի հաշվետվության քննարկումների արդյունքում ձևավորված դիտողություններն ու առաջարկությունները,
- մոնիթորինգի արդյունքները համարել թերի և հանձնարարել ուսումնական ստորաբաժանմանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սահմանված ժամկետներում ծրագրի վերանայման համար:
- մոնիթորինգի արդյունքները համարել անբավարար և սկսել ծրագրի դադարեցման գործընթացը:

28. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ընթացակարգի սխեման ներկայացված է *հավելված 2*-ում, իսկ համապատասխան ժամանակացույցը՝ *հավելված 3*-ում:

3. ԵՊՀ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը

3.1. Պարբերական վերանայման նպատակը և խնդիրները

29. Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է գնահատել ծրագրի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը (ծրագրի նպատակների համարժեքությունը), ինչպես նաև մատուցման փաստացի որակը՝ ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով, որոշում ընդունել ծրագրի հետագա շարունակման նպատակահարմարության կամ փոփոխությունների վերաբերյալ:

30. Վերանայման հիմնական խնդիրներն են.

- վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջարկվածությունը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը,

- ուսումնասիրել ծրագրում ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև հիմնական գործատուների բավարարվածությունը ծրագրի շրջանավարտներից:

- հաշվի առնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ կրթական չափորոշիչներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ, համապատասխան մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող կառույցների պահանջներ) և դրանց հետ համադրել ծրագրի փաստացի կրթական վերջնարդյունքները,

- համակողմանիորեն գնահատել ծրագրի մատուցման փաստացի որակը և ռեսուրսային ապահովվածությունը (դասախոսական, նյութական և այլն),

- գնահատել ժամանակի ընթացքում ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը,

- հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,
- կատարել ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ ու թույլ կողմերը իրականացման ընթացքում, և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,
- հիմնավորել ծրագրի շարունակման, փակման կամ վերանայման նպատակահարմարությունը:

3.2. Պարբերական վերանայման ընթացակարգը

31. Ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը համահամալսարանական գործընթաց է, որտեղ կարող են ներգրավվել են նաև արտաքին փորձագետներ:

32. Ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի նորմատիվային տևողությամբ, լիցենզիայի գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերով և այլն:

33. ԵՊՀ-ում բակալավրի կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանվում է 5÷7, իսկ մագիստրոսի ծրագրերինը՝ 3÷5 տարի:

34. Վերանայման գործընթացը պլանավորում և իրականացնում է ՈւՄՎ–ն՝ համապատասխան ուսումնական ստորաբաժանման (ֆակուլտետ, կենտրոն) հետ համատեղ:

35. ԵՊՀ կրթական ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգն ամբողջությամբ համապատասխանում է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգում»[1] նկարագրված ԵՊՀ կրթական ծրագրերի ներքին փորձաքննության և վերջնական հաստատման ընթացակարգերին (առանց ծրագրի մշակման արտոնման փուլի):

[1] ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ, ԵՊՀ հրատ., Երևան, 2011 (23 էջ):

Հավելվածներ

Հավելված 1. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) հաշվետվության ձևաթերթը

Ստորև ներկայացվում է ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի ձևաթերթը: Ձևաթերթը լրացնում է ծրագրի մոնիթորինգի խումբը, որը հետագայում հաստատվում է ուսումնական ստորաբաժանման խորհրդում և ներկայացվում ԵՊՀ ԳԽ քննարկմանը:

«Հաստատում եմ»

“_____” _____ 201___ թ.

Ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր

_____

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետ/կենտրոն .....

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը .....
.....

Ուսուցման ձևը (առկա, հեռակա) .....

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս) .....

Ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը .....

Ծրագրի վերահաստատման ամսաթիվը .....

Ծրագրի ամբողջական վերանայման ամսաթիվը .....

1. Որակի բարելավման նախորդ ուսումնական տարվա միջոցառումների պլանի կատարողականը (նախորդ մշտադիտարկման արդյունքներով)

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները:

Թիվ	Միջոցառում (գործողություն)	Կատարողականը (%)	Պատասխանատու անձը	Ծանոթություն
1. 2. 3. 4. 5.				

2. Ծրագրի քանակական բնութագրերը

Ուսումնական տարի	2009/2010	2010/2011	2011/2012
Ընդունելությունը և ուսանողական համակազմը			
Դիմորդների թիվը			
Ընդունված ուսանողների թվաքանակը			
Դիմորդների մրցութային ցուցանիշը և անցողիկ շեմային միավորը			
Ուսանողների ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
Ուսանողների առաջադիմության %-ը			
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները (*գերազանց, լավ* և *բավարար* գնահատականների մասնաբաժիններն ըստ ՄՈԳ-ի)			
Ուսանողների շարժը			
Տվյալներ ծրագրի ավարտական տարվա շրջանավարտների վերաբերյալ			
Ամփոփիչ ատեստավորման արդյունքները			
Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը			
Մասնագիտությամբ աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը			

3. Ուսանողական հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի բաղկացուցիչ դասընթացների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները՝ դասընթացի մատուցման որակի, դասավանդման և ուսումնառության մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև տարվա ընթացքում ուսանողների կողմից բարձրացված հարցերն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված միջոցառումները:

4. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի նախորդ ուստարվա շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վերաբերում են կրթական ծրագրի բովանդակությանը, դասավանդման և ուսուցման մեթոդաբանությանը, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության առկա ռեսուրսներին:

5. Ծրագրի դասախոսական կազմի արձագանքը

Ներկայացվում են դասավանդող կազմի նկատառումները ծրագրի իրականացման ընթացքի և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի վերաբերյալ, գնահատվում է կատարված փոփոխությունների և միջոցառումների արդյունավետությունը, ծրագրի ռեսուրսային բավարարվածության վիճակը հաշվետու տարվա կտրվածքով և այլն:

6. Համագործակցային կապերը

Գնահատվում է ծրագիրը սպասարկող այլ ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ, ամբիոններ) հետ համագործակցության ձևերն ու արդյունքները:

7. Ծրագրի փոփոխությունները

Ներկայացվում են նախորդ ուստարում ծրագրում կատարված փոփոխությունները և գնահատվում դրանց իրականացման արդյունքները:

8. Ծրագրի վերանայման և/կամ արտաքին գնահատման արդյունքները

Ներկայացվում է վերջին անգամ ծրագրի վերանայման (կամ հաստատման) և/կամ արտաքին գնահատման (հավատարմագրման) արդյունքները՝ նշելով, թե այդ գործընթացների արդյունքում ծրագրի բարելավման ուղղությամբ արված եզրակացությունների (պահանջների, առաջարկությունների, երաշխավորությունների) կատարման համար պատասխան ինչ միջոցներ են ձեռնարկվել: Բացահայտվում են այն դեպքերը, երբ այդ միջոցառումները չեն կատարվել և պարզաբանվում դրանց պատճառները:

9. Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը

Ներկայացվում են հիմնական միտումները ծրագրի ընդունելության, ուսանողական համակազմի շարժի, ուսումնական առաջադիմության և ծրագրի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, մեկնաբանվում են շեղումները ծրագրի հաստատման ժամանակ արված կանխատեսումներից:

Այս վերլուծության արդյունքում կատարվում են եզրակացություններ ծրագրի պահանջարկվածության և կենսունակության, սահմանված պահանջներին ուսանողական թվակազմի համապատասխանության, դասավանդման և ուսումնառության աջակցման առկա միջոցների համարժեքության մասին, որոնք պետք է հիմք հանդիսանան ծրագրի բարելավմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման համար:

Կազմվում է ծրագրի ուժեղ և թույլ կողմերի մատրիցան:

Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը

	Փաստացի վկայություն	Լավագույն փորձի զարգացման և տարածման առաջարկություններ	Թույլ կողմերի շտկման առաջարկություններ
Ուժեղ կողմերը 1. 2. 3. 4.			

Թույլ կողմերը 1. 2. 3. 4.			

10. Որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը

Կազմվում է ծրագրի որակի բարելավման/բարձրացման ուղղությամբ ուսումնական ստորաբաժանման (ամբիոնի, ֆակուլտետի, կենտրոնի) և համալսարանի կենտրոնական վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը ընթացիկ ուստարվա համար.

Բարելավման ասպարեզը/ առարկան	Պլանավորված միջոցառումը /գործողությունը	Պատասխանատուն	Կատարման ժամկետը
1. 2. 3. 4. 5.			

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի տնօրեն) .....

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի վերաբերյալ

1.

2.

3.

4.

5.

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ..... ուսումնական ստորաբաժանման մեթոդական խորհրդի նիստում (*որոշում թիվ ..... , ամսաթիվ*):

Մեթոդական խորհրդի նախագահ՝ .....

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել ..... ուսումնական ստորաբաժանման խորհրդի կողմից (*որոշում թիվ ..... , ամսաթիվ*):

Ֆակուլտետի դեկան (կենտրոնի տնօրեն)՝ .....

Մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ՈՒՄՎ-ի կողմից:

ՈՒՄՎ պետ՝ .....

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել են ԵՊՀ գիտական խորհրդի նիստում (*որոշում թիվ ..... , ամսաթիվ*):

Ռեկտոր՝ .....

Հավելված 2. ԵՊՀ կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ընթացակարգի սխեման



Հավելված 3. ԵՊՀ կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման) ժամանակացույցը

10 սեպտեմբերի	ԵՊՀ ռեկտորի հրամանը՝ համապատասխան ուս. ստորաբաժանումների (ՌՈՒ) կրթ. ծրագրերի տարեկան մոնիթորինգի անցկացման վերաբերյալ
20 սեպտեմբերի[2]	Ուսումնական ստորաբաժանման (ՌՈՒ) ղեկավարը ստեղծում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի խմբեր (ՄԹԽ)
10 դեկտեմբերի	**ՄԹԽ–երը կազմում են ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունները (ՄՀ), որոնք ներառում են ծրագրի նախորդ տարվա կատարողականի գնահատականը և բարելավման միջոցառումների պլանը**
20 դեկտեմբերի	ՌՈՒ մեթոդական խորհուրդը (ՄԽ) քննարկում է ՄՀ–երը և համապատասխան եզրակացություն տալիս ուս. ստորաբաժանման ղեկավարին
30 դեկտեմբերի	ՌՈՒ ղեկավարը կազմում է իր ստորաբաժանման ծրագրերի տարեկան մոնիթորինգի ամփոփ հաշվետվությունը և ներկայացնում ՌՈՒ խորհրդի քննարկմանը
15 հունվարի	ՌՈՒ խորհուրդը կայացնում է որոշում մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ
31 հունվարի	ՌՈՒ ղեկավարը կազմում է իր ստորաբաժանման ծրագրերի մոնիթորինգի երկամյա հաշվետվությունը և ներկայացնում ՌՈՄՎ
15 փետրվարի	ՌՈՄՎ-ն ստուգում է ՌՈՒ-երի ՄՀ–երի պատշաճությունը, կազմում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր հաշվետվությունը և ներկայացնում է այն ՌՈԱԳ պրոռեկտորի հաստատմանը
01 մարտի	ԵՊՀ ՄԽ-ը քննարկում է ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի ընդհանուր հաշվետվությունը և կազմում ԳԽ որոշման նախագիծ
15 մարտի	**ԵՊՀ ԳԽ-ն ընդունում է որոշում՝ ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի վերաբերյալ**

[2] Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը: